ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(XIX դարի երկրորդ կես - XX դարի 80-ական թթ.)

Խմբագիր՝ Հ.Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այնպիսի բազմազգ երկրում, ինչպիսին Խորհրդային Միությունն էի, կարևոր էի բնակչության տեղաշարժերի (միգրացիա) ուսումնասիրության դերը մի կողմից՝ ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքային ռեսուրսների ճիշտ տեղաբաշխման ու արդյունավետ օգտագործման, մյուս կողմից՝ ազգամիջյան հարաբերությունների զարգացման և կարգավորման գործում: Բնակչության միգրացիաները, որոնք բուռն կերպով էին ծավալվում անցյալ դարի 80-ական թվականներին, գիտատեխնիկական հեղափոխության և ուրբանիզացիայի պայմաններում նպաստում էին տարբեր էթնիկական ընդհանրությունների մերձեցման գործընթացներին: Եթե բնակչության միգրացիաները արագացնում են էթնիկական գործընթացները՝ առաջ բերելով «...էթնոսի այս կամ այն բաղադրամասում փոփոխություններ»[1], ապա այդ փոփոխություններն իրենց հերթին դառնում էին կարևոր նախապայման նրանց այնտիպ տեղաշարժերի համար: Անդրադառնալով այդ խնդրին՝ Վ. Ի. Պերևեդենցևը նշում էր. որ «էթնիկական գործընթացները որոշակիորեն միգրացիայի հետևանք են»[2]: Այն որոշակի ազդեցություն է գործում նաև գյուղի, քաղաքի և տարածաշրջանի բնակչության էթնոսոցիալ կառուցվածքի վրա՝ փոփոխություն մտցնելով էթնիկական խմբերի հարաբերակցության մեջ, ընդլայնելով խառնազգային (ազգամիջյան) ամուսնությունների թվաքանակը[3]:

Խորհրդային տնտեսագիտական և սոցիոլոգիական գրականության մեջ միգրացիոն գործընթացը լայն առումով սահմանվում է որպես «.... տարածության մեջ մարդկանց բոլոր տեսակի տեղաշարժեր», իսկ նեղ առումով՝ «մարդկանց տեղաշարժերի ամբողջություն, տարածքային այնպիսի տեղաշարժեր, որոնք անխզելիորեն կապված են միմյանց կամ բնակության վայրի փոփոխության հետ որոշակի ժամանակաշրջանում»[4]: Նախկին ԽՍՀՄ-ում միատիպ տնտեսական, սոցիալական և քաղաքական հարաբերությունների պայմաններում ազգային տարբեր շրջանների համար բնութագրական էին միգրացիոն շարժունության տարբեր տեմպեր[5]: Աշխատուժի տարածքային ոչ համամասնական տեղաբաշխումը հանգեցրել էի այն բանին, որ նախկին խորհրդային երկրի մի շարք շրջաններ (Անդրկովկաս, Միջին Ասիա) ունեին հարուստ աշխատանքային ռեսուրսներ, իսկ մյուսները (Սիբիր, Հեռավոր Արևելք) մեծապես գգում էին դրանց կարիքը: Վերը նշված շրջանները տարբերվում են իրենց սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման առանձնահատկություններով: Անդրկովկասում և Միջին Ասիայում, շնորհիվ բնակչության բարձր ծնելիության[6], ժողովրդագրական տեմպերը հաճախ առաջ էին անցնում տնտեսականից, որի հետևանքով աշխատունակ տարիքի բնակչության մի մասը զբաղված չէի հանրային ար-

---

[1] ***Бромлей Ю.В.,*** Очерки теории этноса, М., 1983, с. 233.

[2] ***Переведенцев В.И.,*** Методы изучения миграции населения, М., 1975, с. 27.

[3] Социально-культурный облик советской нации. По материалам этносоциологического исследования, отв. ред. ***Арутюнян Ю.В., Бромлей Ю.В.,*** М., 1986, с.16.

[4] ***Переведенцев В.И.,*** указ. соч., с. 9.

[5] Միգրացիոն շարժունության գործակցով առաջին տեղը գրավում էին ՌԽՖՍՀ-ն, Բելոռուսիան, Ուկրաինան և Լիտվան, երկրորդը՝ Մոլդավիան, Ղազախսանը, Էստոնիան, Լատվիան, որոնք, առաջին խմբի համեմատ, ունեին 1,5 անգամ ցածր միգրացիոն գործակից: 1,5-2 անգամ ցածր միգրացիոն շարժունության գործակից ունեին Հայաստանը, Ադրբեջանը, Թուրքմենիան, Կիրգիզիան, Վրաստանը, ամենացածր (3անգամ)՝ Ուզբեկստանը և Տաջիկստանը: Տե՛ս ***Рыбаковский Л.Л., Тарасова Н.В.,*** Взаимодействие миграционных и этнических процессов. Социологические исследования (далее С.И.), N4, 1982 , с. 30.

[6] 1979թ. մարդահամարի տվյալներով՝ Ուզբեկստանում ընտանիքի միջին չափը կազմել էր 5.5, Տաջիկստանում՝ 5.7, Թուրքմենիայում՝ 5.5, Հայաստանում՝ 4.7, Վրաստանում՝ 4.0, Ադրբեջանում՝ 5.1 մարդ: Տե՛ս Численность и состав населения СССР: По данным Всесоюзной переписи населения 1979г., М., 1984, с. 220-221:

տադրության մեջ[1]: Միաժամանակ, մի կողմից ամուր կերպով պահպանված ազգակցական կապերը, ինչպես նաև բազմանդամ ընտանիք ունենալու հանգամանքը և ավանդական կենցաղի մի շարք առանձնահատուկ գծերը, մյուս կողմից անհատի անձնական գործոնները՝ կրթությունը և մասնագիտական պատրաստվածությունը, ազդում էին տարածքային շարժունության վրա[2]: Այդպիսի պայմաններում, հատկապես Կովկասում, այդ աշխատունակ բնակչության որոշ մասը, չփոխելով իր մշտական բնակավայրը, տարվա որոշակի շրջան ժամանակավորապես մեկնում էր այնպիսի վայրեր, որտեղ գգացվում էր աշխատուժի կարիք: Այսպիսով, արտագնացությունը աշխատուժի փոխանակման յուրահատուկ ձև էր՝ աշխատանքային ռեսուրսներ ունեցող շրջաններից դեպի դրանց կարիքն ունեցող շրջաններ:

Լինելով տնտեսագիտական եիմնահինդիր՝ արտագնացությունն ունի նաև իր ուսումնասիրության էթնոսոցիոլոգիական եայեցակետերը[3], որոնք առաջին հերթին կապված են տարվա որոշակի մասը սեփական, մյուս մասը՝ այլ էթնիկ միջավայրում նրանց գործունեության հետ: Եթե սեփական էթնիկ միջավայրում նրանք որոշակի լեզվի, մշակույթի, ազգային հոգեբանության, ավանդույթների և սովորույթների կրողներ ու վերարտադրողներ են, ապա այլէթնիկ միջավայրում նրանց համար տարբեր էթնիկական իմբերի հետ ակտիվ և երկարաժամկետ շփումների իրական նախապայմաններ են ստեղծվում: Դրա հետևանքով տեղի է ունենում տարբեր մշակութային արժեքների փոխներթափանցման գործընթաց:

Հետազոտության նպատակն է արտագնացությունը դիտարկել որպես բարդ սոցիալ-տնտեսական երևույթ և պարզել, թե այն ինչ ազդեցություն է գործում էթնիկական գործընթացներում, և դրանք ինչպես են ընթանում տարբեր սոցիալ-ժողովրդագրական իմբերում: Միաժամանակ, արտագնացության ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտելու էթնիկական այն գործոնները (լեզվի իմացություն, ազգամիջյան շփումներ, ներընտանեկան հարաբերությունների առանձնահատկություններ, ավանդույթներ և սովորույթներ), որոնք կարող են ազդել այդ գործընթացների արդյունավետության վրա:

Բնակչության միատարր էթնիկական կազմի շնորհիվ արտագնացության էթնոսոցիալ բնութագիրը առավել ցայտուն էր դրսևորվում Հայաստանում, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ինչպես նախկին ԽՍՀՄ-ի ազգային մի շարք շրջանների, այնպես էլ հանրապետության համար վեր հանել նրա զարգացման ընդհանուր և առանձնահատուկ գծերը:

Վերը նշված հիմնախնդրի լուծման համար աշխատության մեջ առանձնացված են մի շարք հարցեր, որոնցից հատկապես ուշադրության են արժանի հետևյալները.

1) Արտագնացությունը Հայաստանում ունի իր պատմական զարգացման իսոր արմատները, և այս տեսանկյունից կարևոր է ոչ միայն անցյալ դարաշրջանում նրա պատճառների, ընդգրկման շառավղների, մասշտաբների և դինամիկայի էթնոսոցիալ բնութագրի քննարկումը, այլև էթնիկ ավանդութային գործոնի դերի բացահայտումը, որը կարող է այդ գործընթացին հաղորդել ազգային ինքնատիպություն:

2) Ժամանակակից արտագնա իմբերի սոցիալ-մասնագիտական կազմի ընդհանուր բնութագրությունը, տիպաբանությունը և դրանց ձևավորման գործում էթնիկական առանձնահատկությունների բացահայտումը:

3) Անհատի էթնիկ վարքագծի դերը արտագնացության դրդապատճառների համակարգում:

---

[1] 1979թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում, Ադրբեջանում, Կիրգիզիայում, Հայաստանում և Բելոռուսիայում անձնական օժանդակ տնտեսության մեջ զբաղվածների թիվը աճել էր 1,2-1,8, իսկ Տաջիկստանում՝ նույնիսկ 3,9 անգամ: Տե՛ս Источник средств существования, Вестник статистики, N 9,1982, с. 79-80.

[2] ***Макаров Л.В., Морозов Г.Ф., Тарасов Н.В.,*** Региональные особенности миграционных процессов в СССР, М., 1986, с. 91.

[3] Արտագնացության էթնոսոցիոլոգիական հայեցակետերի մասին մանրամասն տե՛ս *Галстян М.В.*, Проблемы изучения этносоциальных аспектов сезонной миграции. Проблемы регионального планирования (Тезисы докладов Всесоюзной школы ученых-экономистов), ч. 2, Владимир, 1987, с. 366-367.

4) Այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ արտագնացների շփումները և միջավայրի ազդեցությունը նրանց սոցիալ-մշակութային կերպարի վրա: Նեղ առումով դրանք կարող են որոշակի փոփոխություններ առաջ բերել անհատի արժեքային կողմնորոշման, լեզվական իմացության, ավանդական մշակութակենցաղային բնութագրում, իսկ լայն առումով կարող են ընդգրկել նաև այն գյուղական բնակավայրերի էթնոսոցիալ կառուցվածքը, որտեղ դիտարկվում են արտագնացության բարձր տեմպեր:

Աշխատությունում արտագնացության երևույթին ցուցաբերվել է համակողմանի մոտեցում, որտեղ հաշվի են առնված դրա պատմական, տնտեսական, էթնոմշակութային, սոցիալ-հոգեբանական հայեցակետերը:

Անցած դարի 80-ական թվականներին արտագնացության հիմնախնդրի քննարկումը լայն բանավեճի առարկա էր դարձել գիտական գրականության մեջ և մամուլում: Հեղինակներից ոմանք այն գնահատել են որպես սոցիալիզմի սկզբունքներին խորթ երևույթ, իսկ մյուսները նշել են, որ արտագնացությունը ԽՍՀՄ-ի մի շարք շրջանների տնտեսական յուրացման գործում մեծ դեր է կատարել: Հրապարակախոսներից ոմանք էլ այն գնահատում են որպես «սոցիալական ախտաբանություն», որը ձևախեղում է անհատին և հանգեցնում ծանր սոցիալական հետևանքների[1]:

Հիմնախնդրին անմիջական արձագանքները պայմանավորված էին երկու հանգամանքով.

Առաջին՝ տաղեցտարի ընդլայնվող արտագնացության մասշտաբներով, որին մասնակցում էին տարբեր ազգության պատկանող մարդիկ: Այսպես, ըստ Ա. Բրովինի՝ ԽՍՀՄ-ում արտագնացների տարեկան միջին թիվը տասներորդ հնգամյակում տատանվել է 1 մլն-ից մինչև 2,3 մլն մարդու սահմաններում[2]: ԽՍՀՄ աշխատանքի պետական կոմիտեի և պետպլանի աշխատանքի բաժնի գնահատմամբ ամեն տարի այդ գործընթացին մասնակցել է 120-150 հազար մարդ[3]:

Արտագնացությունը մեծ մասշտաբներ էր ընդունել Անդրկովկասում (մոտ 100 հազ. մարդ) և Հյուսիսային Կովկասում (հատկապես Չեչենա-Ինգուշական Ինքնավար Հանրապետությունում): Եթե Չեչենա-Ինգուշական Ինքնավար Հանրապետությունից ամեն տարի արտագնացության էր մեկնում մոտ 26 հազ. մարդ[4], ապա Հայկական ԽՍՀ-ից՝ մոտ 25-30 հազար[5]: Այն համարվում էր հանրապետության առջև ծառացած լուրջ խնդիր, և այդ էր պատճառը, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, 1987թ. անդրադառնալով «Հայկական ՍՍՀ-ի լեռնային և նախալեռնային շրջանների տնտեսական և սոցիալական հետագա զարգացման միջոցառումների մասին» որոշման կատարման ընթացքին, մեկ անգամ ևս նշեց, որ «Արթիկի, Ախուրյանի, Կալինինոյի, Մարտունու շրջաններում շարունակում է բարձր մնալ արտագնացությունը»[6]:

Արտագնացությունը ակտիվորեն էր գարգանում նաև Մոլդավիայում, Արևմտյան Ուկրաինայում և Բելոռուսիայում, որտեղ ոչ լրիվ տվյալներով ամեն տարի այդ գործընթացում ընդգրկվում էր մոտ 50 հազ. մարդ[7]:

Երկրորդ՝ արտագնացությունը արդեն երկար տարիներ կայուն կերպով պահպանում էր իր մասշտաբները և դադարել էր պատահական երևույթ լինելուց, մինչդեռ այն չի ստացել իր ամբողջական արժեքավորումը: Այդ կապակցությամբ Վ.Մ. Մոսիենկոն նշում է. «Դժվար է ժամանակակից միգրացիային ամբողջական գնահատական տալ, քանի որ սեզոնային միգրացիան հատուկ կերպով չի ուսումնասիրվել, բայց առանձին տվյալներ

---

[1] «Советская Россия», 14.01.1982г., «Литературная газета», 20.08.1986г., 14.01.1987., 15.061987г., "Известия", 18.04. 1985г., 15.04.1986г.,«Սովետական Հայաստան», 20.12. 1984թ.:

[2] ***Бровин А.,*** Сезонные бригады: Плюсы и минусы, Социалистический труд, 1983, N10, с. 80.

[3] ***Адонц М.А., Давтян Л.М.*** и др., Сезонная миграция трудовых ресурсов.–В кн.: Проблемы повышения миграционной подвижности сельского населения Средней Азии, М., 1985, с. 103.

[4] ***Войтович С.А., Никифорок Я.Д.***, За что платить шабашнику. Экономика и организация промышленного производства, 1988, N6, с. 127.

[5] ***Адонц М.А., Давтян Л.М.*** и др., указ. соч., с. 103.

[6] «Սովետական Հայաստան», 2. 01.1987թ.:

[7] «Известия», 15 апреля 1986г.

վնայում են դրա նշանակալի և բարդ կառուցվածքի մասին»[1]:

Այդ խնդրի ուսումնասիրության նման վոճակը առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով; որ արտագնացությունը դեռևս ներկայացնում էի տարերային, դժվարությամբ հաշվառման ենթարկվող գործընթաց, և բացակայում էին փաստացի վիճակագրական տվյալները:

Երևույթի վերաբերյալ դեռևս չի ստեղծվել այն բնութագրող ամբողջական հասկացությունների համակարգ, իսկ եղածները էլ որոշակի ճշգրտման կարիք ունեն: Համապատասխան գիտական գրականությունում, ինչպես նաև ժողովրդի խոսակցական լեզվում այդ երևույթը հաճախ կոչում են տարբեր հասկացություններով; Հայաստանում նրանց անվանում էին խոպանչիներ, արտագնացներ, սեզոնային միգրանտներ, իսկ ռուսերեն խոսակցական լեզվում «շաբաշնիկներ», «վայրի բրիգադներ», «էժան վաստակ ռրոնոդներ», «սերմնագռավներ» (грачи), «կոունկներ» և այլն: Անվանումների նման բազմազանությունը խոսում է երևույթի բարդության և դրսևորման մի շարք ձևերի մասին, որոնց շատ հաճախ ոչ ճիշտ սահմանազատման հետևանքով ստանում էին միևնույն որակավորումը: Օրինակ՝ տեղի բնակչության շրջանում, որտեղ աշխատում էին արտագնացները, լայն տարածում էի ստացել «շաբաշնիկություն» անվանումը, որը ոչ միայն ճիշտ չէր արտացոլում, այլև միակողմանի պատկերացում էի ստեղծում արտագնացության ողջ գործընթացի վերաբերյալ: Պայմանականորեն կարելի է առանձնացնել տարբերությունները ձևավորված սեզոնային բրիգադների երեք ձևեր: Դրանք միմյանցից տարբերվում էին ինչպես բրիգադների և եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրներով; այնպես էլ աշխատանքային շրջանի տևողության ժամկետներով;

Առաջինը սեզոնային բրիգադների այն խմբերն են, որոնք ունեին որոշակի մշտական կազմ և աշխատում էին վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Բրիգադի անդամները տարիներ շարունակ մեկնում էին սեզոնային աշխատանքի, իսկ միջսեզոնի ընթացքում նրանց մի մասը աշխատում էի կամ էլ աշխատանքային ստաժի պահպանման համար ձևականորեն գրանցվում որևէ կազմակերպությունում: Եկամտի հիմնական աղբյուրը սեզոնի ընթացքում ստացած աշխատավարձն էի: Այդ խմբերը հիմնականում ձևավորվել էին Հյուսիսային Կովկասի, Անդրկովկասի, Արևմտյան Ուկրաինայի և Բելոռուսիայի գյուղական բնակչության հաշվին՝ ընտանեկան, ազգակցական, դրացիական, ընկերային սկզբունքների հիման վրա:

Երկրորդը ամառային բրիգադներն էին, որոնք աշխատում էին գլխավորապես ամռան ամիսներին: Նրանց կազմը անընդհատ վոփոխվում էի, քանի որ սեզոնային աշխատանքի էին մեկնում իրենց արձակուրդի հաշվոն: Այդ խմբերի ձևավորման աղբյուրը քաղաքային բնակչությունն էր: Դրանք մեծ մասամբ մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ էին՝ ինժեներներ, գիտաշխատողներ, մանկավարժներ, ուսանողներ և այլն: Սեզոնի ընթացքում ձեռք բերված վաստակը համարվում էի եկամտի լրացուցիչ աղբյուր:

Երրորդ ձևը ժամանակավոր կազմ ունեցող սեզոնային բրիգադներն էին, երբ բրիգադիրը իր մեկ-երկու ազգականների հետ մեկնում էի հեռավոր շրջաններ և կազմավորում բրիգադներ: Բրիգադիրը նրանց երաշխավորում էի անվճար սնունդ և քիչ աշխատավարձ: Բրիգադները կազմավորվում էին պատահական մարդկանցից, որոնք հաճախ չունեին համապատասխան շինարարական մասնագիտություն: Նրանք աշխատում էին մեկ սեզոն, որի ընթացքում աշխատավարձի հիմնական բաժինը մտնում էի բրիգադիրի և նրա մարդկանց գրպանը: Կառուցվող շինարարական օբյեկտները հանձնվում էին ցածր որակով և թերություններով: Զարաշահումների առումով քրեական զոնների մեծ մասը բաժին էի ընկնում այս բրիգադներին[2]: Վերը նշված խմբերից Հայաստանում մեծ տարածում էի գտել սեզոնային շինարարական բրիգադների առաջին

[1] Демографический энциклопедический словарь, М., 1985, с. 389.

[2] ***Бровин А.***, указ. соч., с. 79.

ձևը: Դրանք ներկա հետազոտության օբյեկտն են և ստացել են ***արտագնացություն*** կամ ***տարագնացություն*** անվանումը[1]: Արտագնացություն կամ տարագնացություն հասկացությունը իր ծագումնաբանությամբ առավել հին է. անցյալում այն հայ իրականության մեջ ստացել էր նաև ***պանդխտություն*** անվանումը:

Ժողովրդախոսակցական լեզվում օգտագործվող ***խոպանչիներ*** (խոպան գնացողներ) տերմինի ծագումնաբանությունը կապված է Հայրենական մեծ պատերազմից հետո՝ 1950-60-ական թվականներին, նախկին ԽՍՀՄ-ի տարբեր շրջաններում գոյություն ունեցող խոպան հողերի յուրացման հետ, որը նոր թափ հաղորդեց այդ գործընթացին[2]:

Սեզոնային միգրացիա և արտագնացություն հասկացությունները հաճախ գիտական գրականության մեջ օգտագործում են միևնույն իմաստով: Մինչդեռ սեզոնային միգրացիա հասկացությունն ունի առավել լայն բովանդակություն, և արտագնացությունը հանդես է գալիս որպես դրա բաղկացուցիչ մաս[3]: Բացի դրանից, արտագնացության վերաբերյալ օգտագործվող որոշ եզրույթներ երբեմն միակողմանիորեն պարունակում են բացասական դիրքորոշում, որը առաջին հերթին պայմանավորված էր այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության հետ ստեղծվող կոնֆլիկտային տարբեր իրավիճակներով:

Երևույթների ճշգրտման հետ միաժամանակ սեզոնային բրիգադների նման տիպաբանականացումը հնարավորություն է տալիս դրանց հետագա գործունեության համար մշակելու համապատասխան մոտեցում:

Սույն աշխատանքի համար օգտագործվել են հետևյալ աղբյուրները.

1) Կուսակցական-կառավարական փաստաթղթեր, որոնք ընդունվել են խորհրդային ժամանակաշրջանում: Այդպիսի որոշումներ ընդունվեցին 1930-ական և 1950-ական թվականներին ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողտնտխորհի, ինչպես նաև 1970-1980-ական թվականներին Մինիստրների խորհրդի, Աշխատանքի պետական կոմիտեի և ՀամԿԽ-ի կողմից, որոնք սկզբունքային նշանակություն ունեին արտագնացության իրավական կողմերի կարգավորման գործում: Դրանցից հատկապես կարևոր էին ստորև նշված փաստաթղթերը[4]:

2) **Վիճակագրական նյութեր.** Արտագնացության մասշտաբների, դինամիկայի մասին հետաքրքիր նյութեր են պարունակում նախահեղափոխական շրջանում լույս տեսած մի շարք պարբերականներ և վիճակագրական ժողովածուներ[5]: Կարևոր աղբյուր են ծառայում նաև 1959, 1970, 1979 թվականների համամիութենական մարդահամարների տվյալները, որոնք, ճիշտ է, անմիջականորեն չեն առնչվում այդ հիմնախնդրին, սակայն հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանրապետության բնակչության էթնիկական կազմի և գբաղվածության ոլորտի, սոցիալական կառուցվածքի, էթնոլեզվական

---

[1] Ըստ ***Էդ. Աղայանի***՝ «արտագնացություն» տերմինը նշանակում է. «1. Դուրս՝ ուրիշ տեղ գնացող, իր մշական վայրից այլ տեղ մեկնող՝ այլ տեղում աշխատանք կատարող: 2. Աշխատելու նպատակով տեղից տեղ գնացող մարդ»: Տե՛ս ***Աղայան Էդ.,*** Արդի եայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 142:

[2] ***Գալստյան Մ.,*** Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը (ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի), Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Ե., 1998, էջ 4:

[3] Հեղինակներից ոմանք, ըստ ընդգրկման շառավիղների, միգրացիոն գործընթացներում առանձնացնում են անվերադարձ, սեզոնային և ճոճանակային, իսկ մյուսները սեզոնայինից անջատում են նաև էպիզոդիկ ձևեր: Տե՛ս ***Рыбаковский Л.Л.,*** Миграция населения: Прогнозы, факторы, политика, М., 1987, с. 23.

[4] Об устранении препятствия к свободному отходу крестьян на отхожие промыслы и сезонную работу (далее Об отходничестве). Постановление Центрального исполнительного комитета и Сов. Народных Комиссаров от 30 июня 1931г., Соб. законов распоряжений рабоче-крестьянского правительства СССР, отд. 1, М., 1931, N42, статья 286, Съезды Советов Союза ССР, Союзных и Автономных Советских соц. респ., Соб. документов в трех томах, т. III, М., 1960, с. 191. О новом порядке организованного труда в колхозе. – Собрание законов и распоряжений рабоче-крестьянского правительства СССР, Отдел I, 1933, N21, статья 116, Об упорядочении отходничества на сезонные работы, Постановление Совета Министров СССР от 19 июня 1973г., N421, Собрание Постановлений правительства СССР, 1973, N 15, с. 84 и др.

[5] «Сборник статистических сведений о Кавказе», Тифлис, 1869, т. 1, с. 33, 49, 54, 59, 67; Обзор Эриванской губернии за 1901г., Эривань, 1902, с. 11; ...за 1912г, Эривань, 1913, с. 14-15; ... за 1913г, Эривань, 1914, с. 15; Памятная книжка Эриванской губернии за 1908, Эривань, 1908, с. 248 и др.; «Մշակ», Թիֆլիս, 1899, N119, 1900, N25, N45, N46:

գործընթացների և այլ հարցերի մասին[1]: Օգտագործվել են նաև ՀԽՍՀ կենտրոնական վիճակագրական վարչությունից, Պետպլանի արդյունաբերական էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի արխիվներից վերցված տվյալներ[2], ինչպես նաև հանրապետությունում և ԽՍՀՄ-ում լույս տեսած տարբեր վիճակագրական ժողովածուներ:[3]

3) Դաշտային ազգագրական նյութեր, որոնք հեղինակի կողմից 1985-1987թթ. գիտարշավների և անհատական գործուղումների միջոցով ՀՀ տարբեր մարզերի գյուղերի ծխական մատյաններից հավաքված նյութերն են:[4] Դրանք վերաբերում են արտագնացների ընտանիքների կազմին և թվաքանակին, մասնագիտությանը, տնտեսական հնարավորություններին, այլ հանրապետություններ մեկնելու վայրերին և այլն:

Արժեքավորելով այդ աղբյուրները՝ այնուհանդերձ դրանք հնարավորություն չեն տալիս ուսումնասիրել արտագնացության էթնոսոցիալ բնութագրերը: Ավելին, արտագնացության վերաբերյալ կոնկրետ վիճակագրական տվյալների բացակայության հետևանքով հնարավոր չէ կանխատեսել երևույթի հետագա զարգացման մասշտաբներն ու դինամիկան:[5] Այդ նյութերում բացակայում էին նաև արտագնացության դրդապատճառների, էթնիկական վարքագծի, սոցիալ-մասնագիտական կազմի վերաբերյալ տվյալները:

Նշված խնդիրների պարզաբանմանը նպաստեցին 1987թ. արտագնացների և նրանց ընտանիքների շրջանում հարցաթերթիկի միջոցով իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները, ինչպես նաև հիմնահիմնդրի հետ առնչվող հանրապետության դեկավարների և գիտության տարբեր ոլորտների մասնագետների շրջանում անցկացրած փորձագիտական հարցման տվյալները:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք էր ծառայել «ԽՍՀՄ-ում ազգերի մերձեցման և զարգացման սոցիալ-մշակութային պայմանները» ծրագիրը[6]: Համաձայն այդ ծրագրի՝ կազմվել է հարցաթերթիկ, որ-

Աղյուսակ 1

Սարուխան, Փանիկ և Գեղաշեն գյուղերի արտագնացների թիվը 1979-1986թթ.

Տարեթվեր	Սարուխան		Փանիկ		Գեղաշեն	
	Բնակչ. թիվը	Արտագնացների թիվը	Բնակչ. թիվը	Արտագնացների թիվը	Բնակչ. թիվը	Արտագնացների թիվը
1979	6600	780	2474	335	2660	158
1980	6677	720	2488	328	2713	164
1981	6737	900	2411	301	2785	80
1982	6815	981	2472	249	2840	85
1983	6951	978	2493	353	2912	80
1984	7078	797	2516	302	3028	84
1985	7229	880	2526	330	2981	82
1986	7300	1034	2553	337	3030	83

[1] Итоги Всесоюзной переписи населения 1959г., Армянская ССР, М., 1963, Итоги Всесоюзной переписи населения 1970г., т. VII, М., 1974; Итоги Всесоюзной переписи населения 1979г., по Армянской ССР, Ер., 1980.

[2] Նյութերը պահպանվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվում (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԷԲԱ):

[3] Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979г., М., 1984; Народное хозяйство Армянской ССР в 1985г.; Статистический ежегодник, Е., 1986, и др.

[4] Այդպիսի նյութեր հավաքվել են Լոռու մարզի Մեծավան, Արչապետ, Շիրակի մարզի Անուշավան, Մարմաշեն և Փանիկ, Գեղարքունիքի մարզի Սարուխան, Երանոս, Վերին և Ներքին Գետաշեն, Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղերից: Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԷԲԱ:

[5] Այդ կապակցությամբ ***Բ.Խորևը*** և ***Վ.Չապեկը*** նշում են. «Ինչ վերաբերում է սեզոնային միգրացիային, ապա այստեղ վիճակագրական հաշվարկ գրեթե չի կատարվել, և միայն կարելի է խոսել ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի վերաբերյալ ոչ ամբողջական ավյալների մասին»: Տե՛ս ***Хорев Б.С., Чапек В.Н.,*** Проблемы изучения миграции населения (Статистико-географические очерки), М., 1978, с. 38.

[6] ***Арутюнян Ю.В.,*** Социально-культурные аспекты развития и сближения наций в СССР (Программа, методика и перспективы исследования). Советская этнография (далее СЭ), 1972, N3.

տեղ տեղ էին գտել արտագնացության պատճառներին, ընդգրկման շառավղներին, արտագնացության ժամկետներին, արտագնա խմբերի ձևավորման աղբյուրներին, սոցիալ-մասնագիտական կազմին, միջանձային շփումներին և դրանց ազդեցություններին, հոգևոր և նյութական մշակույթի ոլորտներին վերաբերող հարցեր:

Հետազոտության ընտրանքը ուներ ներկայացուցչական բնույթ: Հարցման ենթարկված անհատներն ընտրվել էին գյուղխորհրդի ծխական մատյանների հիման վրա, որտեղ հաշվի էին առնված նրանց տարիքը, կիթությունը, մասնագիտությունը, ընտանեկան կազմը, տնտեսական դրությունը, նախնական զբաղվածության ոլորտը: Բացի անձնական գործոններից, ընտրանքի համար սեզբունքային նշանակություն ունեին նաև բնակավայրից կատարվող արտագնացության ծավալները, բնակավայրի մեծությունը, բնակլիմայական պայմանները, գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման ուղղվածությունը, պատմաազգագրական առանձնահատկությունները և այլն: Այդ գործոնները իրենց ազդեցությունն էին թողնում ինչպես բնակչության զբաղվածության, այնպես էլ նրանց կենսապահովման (բնակավայր, բնակարան, հագուստ, ուտեստ) և սոցիոնորմատիվ մշակույթի վրա[1]: Վերը նշված գործոնների հիման վրա ընտրվել են նախկին ՀԽՍՀ երեք վարչատարածքային շրջանների տարբեր մեծության գյուղական բնակավայրեր. Կամոյի շրջանից՝ Սարուխան (մինչև 8000 բնակիչ), Արովյանի շրջանից՝ Գեղաշեն (մինչև 4000 բնակիչ), Արթիկի շրջանից՝ Փանիկ (մինչև 3000 բնակիչ) գյուղերը[2]: Ստորև բերված աղյուսակ 1-ը ցույց է տալիս արտագնացների թվաքանակի Սարուխան, Փանիկ և Գեղաշեն գյուղերում 1979-86թթ.: Վերը նշված գյուղերում նկատելի են արտագնացության ծավալների տարբերություններ: Ըստ աղյուսակի՝ 1986թ. Սարուխան գյուղն ուներ 7300 բնակիչ, որոնցից արտագնացության էի մեկնել 1034 մարդ, Փանիկ գյուղը, որի բնակչությունը կազմել էր 2553 մարդ, արտագնացության էի մեկնել 337 մարդ, իսկ Գեղաշեն գյուղի 3030 բնակչից՝ 83 մարդ: Հարցման ենթարկված ընտրանքի ամբողջությունը կազմում է հանրապետության արտագնացների 1%-ը: Ընտրանքի հնարավոր սխալը կարող է տատանվել ±2,5%-ի սահմաններում:

Արտագնացության թեման նախահեղափոխական շրջանում լայնորեն արծարծվել է հայ գրականության մեջ[3] և ժողովրդական պանդխտության երգերում[4]: Կապված հայ գյուղի սոցիալ-տնտեսական պրոբլեմների և բնակչության նիստ ու կացի, սովորույթների քննարկման հետ՝ այդ թեմային անդրադարձել են նաև պատմաբանները,[5] տնտեսագետները[6] և ազգագրագետները[7]:

Արտագնացության պրոբլեմը քննարկվել է նաև հեղափոխությունից հետո աշխատուժի զբաղվածությանը, կոլեկտիվացմանը, գյուղա-

---

[1] Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (На материалах Армянской сельской культуры), Е., 1983, с. 35-36.

[2] Գյուղականի հետ եամեմատած՝ արտագնացության ցածր տեմպեր են դիտարկվում քաղաքային բնակչության շրջանում, որի պատճառով էլ հետազոտության ընտրանքում ընդգրկված է նրան գյուղական բնակչությունը: Այդ մասին են վկայում աշխատանքի 26 և 27 աղյուսակներում բերված վիճակագրական ավյալները:

[3] ***Նալբանդյան Մ.***, Երկեր., հ.4, Ե., 1983, էջ 63-67; ***Ռաֆֆի***, Երկեր., հ. 4, Ե., 1984, էջ 64-146; ***Իսահակյան Ա.***, Երկեր, հ.,1 Ե., 1979, էջ 464;***Վարուժան Դ.***, Երկեր, հ. 1, Ե., 1988, էջ 115, 121; ***Միամանթ***, Ե., 1979, էջ 162, 164, 165, 168, 171, 175; ***Զոհրապ Գ.***, հ. 1, Ե., 1962, էջ 53-68; ***Արեյան Մ.***, Երկեր, գիրք Բ, Ե., 1967, էջ 62-70:

[4] ***Մկրտչյան Մ.Ա.***, Հայ ժողովրդական պանդխտության երգեր, Ե., 1961, էջ 43-47:

[5] ***Հովհաննիսյան Ա.***, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 359-362; ***Համբարյան Ա.Ա.***, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Ե., 1965, էջ 229-230; նույնի, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմությունից (XIXդ. երկրորդ կես, XX դարի սկիզբ), Ե., 1983, էջ 67-76, 155-158; նույնը, Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացության մասին, Լրարեր եասարակական գիտությունների (այսուհետ՝ ԼՀԳ), N8, 1985; Հայ ժողովրդի պատմություն (այսուհեա՝ ՀԺՊ), հ. 6, Ե., 1981, էջ 75-89:

[6] ***Адонц М.А.***, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Е., 1957, с. 345-355; ***Пикичян Г.***, Народное хозяйство и кооперация Армении, Тифлис, 1927, с.30-31; ***Стопани А.М.***, Нефтепромышленный рабочий и его бюджет, Баку, 1916, с. 5-46.

[7] Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գիրք Ա (N1), Շուշի, 1896, էջ 174; գիրք Բ (N2), Թիֆլիս, 1897, էջ 80, 85, 164-169; գիրք Ե (N1), Թիֆլիս, 1899, էջ 49; գիրք X, (N10) Թիֆլիս, 1903, էջ 126, 131; գիրք XI (N1), Թիֆլիս, 1904, էջ 66; գիրք. XVIII (N2), Թիֆլիս, 1908, էջ 136-137, 146; գիրք XIX (N1), Թիֆլիս, 1910, էջ 33; ***Արվանձայանց Գ.***, Երկեր, Ե., 1982, հ. 2, էջ 89-90, 329-330, 333-335, 363; ***Լիսիցյան Ա.***, Զանգեզուրի հայերը, Ե., 1969, էջ 162-163, 184, 246-247:

տնտեսության մեքենայացմանն ու ինդուստրացմանը նվիրված աշխատություններում:[1]

Հետպատերազմյան ժամանակաշրջանում բնակչության միգրացիոն գործընթացների ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունի Վ.Ի. Պերևեդենցևը: Սիբիրի բնակչության միգրացիոն գործընթացների ուսումնասիրության ընթացքում նա միաժամանակ ուշադրություն է դարձրել միգրացիայի մեթոդարանական հարցերին[2]: Սիբիրյան գյուղերի սոցիալական զարգացման ու նրա բնակչության միգրացիայի վերաբերյալ հետազոտություն է անցկացրել ԽՍՀՄ ԳԱ սիբիրյան բաժանմունքը՝ Տ. Ի. Զասլավսկայայի գլխավորությամբ: Քննարկելով հիմնականում գյուղից քաղաք բնակչության տեղաշարժերը՝ նրանք, տեսական և մեթոդաբանական հարցերի մշակմանը զուգընթաց, իրենց աշխատություններում առաջինը սկիզբ դրեցին անհատի միգրացիոն վարքի ուսումնասիրությանը:[3]

Այդ ժամանակաշրջանի միգրացիոն գործընթացներին վերաբերող գրականության մեջ մեծ տեղ է հատկացված նաև բնակչության վերաբնակեցման,[4] միգրացիայի կանխարգելման և մոդելավորման[5] բնակչության տարածքային տեղաբաշխման կատարելագործման հիմնահարցերին[6]: Չնայած այն փաստին, որ սեզոնային աբաագնա աշխատանքն ընդհանուր միգրացիոն գործընթացի բաղկացուցիչ մասերից է, նշված հեղինակների մոտ բացակայում է քննարկվող երևույթի ամբողջական լուսաբանումը: Բուն արտագնացության հիմնախնդրի վերաբերյալ գոյություն ունեն շատ քիչ թվով ուսումնասիրություններ: Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել մի քանի հոդվածներ, որոնք լույս են տեսել վերջին տարիներին: Հոդվածի հեղինակները, իրենց առջև դնելով որոշակի խնդիրներ, անդրադարձել են այդ հիմնախնդրի տարբեր կողմերին, որտեղ երբեմն տրվել են նաև ոչ ճիշտ՝ միակողմանի գնահատականներ[7]:

Եթե քաղաքային բնակչության ձևավորման և ադապտացման տեսանկյունից միգրացիոն գործընթացները արդեն որոշակի քննարկման առարկա են դարձել խորհրդային ազգագրական գրականության մեջ,[8] ապա նույնը չենք կարող ասել արտագնացության վերաբերյալ:

Բնակչության միգրացիոն գործընթացներն ընդգրկել էին նաև միջցամաքային և միջպե-

---

[1] ***Գեղամյան Գ.Ս.***, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1921-1936), Ե., 1978, էջ 93-96; ***Рогачевская Л.С.***, Решающий этап ликвидации безработицы в СССР. История СССР, N3, 1968; ***Арутюнян Ю.В.***, Коллективизация сельского хозяйства и высвобождение рабочей силы для промышленности. – В кн. Формирование и развитие советского рабочего класса (1919-1961), М., 1964, с.33:

[2] ***Переведенцев Б.И.***, указ. соч.; Его же, Миграция населения и трудовые проблемы Сибири. Новосибирск, 1966; Его же, Плачу долги, даю взаймы: Актуальные проблемы демографии, М., 1983.

[3] Миграция сельского населения. М., 1970; Методологические проблемы системного изучения деревни, Новосибирск, 1977; Методологические проблемы системного изучения деревни, Новосибирск, 1980; ***Корель Л.В.***, Перемещения населения между городом и селом в условиях урбанизации, Новосибирск, 1982 и др.

[4] ***Хорев Б.С., Чапек В.И.***, указ. соч.; ***Хорев Б.С.***, Проблемы городов. (Урбанизация и единая система расселения в СССР). М., 1975; ***Мойсенко В.М.***, Территориальное движение населения. Характеристика и проблемы правления, М., 1985; ***Вечканов Г.С.***, Миграция трудовых ресурсов в СССР (Политико-экономический аспект) Л., 1981 и др.

[5] ***Рыбаковский Л.Л.***, указ. соч.

[6] ***Староверов В.И.***, Социально-демографические проблемы деревни. Методология, методика, опыт анализа миграции, М., 1975; ***Оникиенко В.В., Поповкин В.А.***, Комплексное исследование миграционных процессов. Анализ миграции населения УССР, М., 1973; ***Топлин А.В.***, Территориальное перераспределение трудовых ресурсов в СССР. М., 1975; ***Ходжабекян В.Е., Вазе Ю., Шафер Р.***, Демографические проблемы и воспроизводство трудовых ресурсов, Е., 1983 и др.

[7] ***Бровин А.***, указ. соч.; ***Адонц М.А., Давтян Л.М.***, указ. соч.; ***Шабанова М.А.***, Сезонные строители в Сибирском селе, Известия АН СССР Сибирского отделения, Серия экон. и прик. социологии, N7, вып. 2,1986; её же, Портрет строителя – сезонника, 1986, N9; Житие одного шабашника, Экономика и организация промышленного производства АН СССР Сибирского отдела, N3 (153), 1987; ***Войтович С.А., Никифорок Я.Д.***, указ. соч.

[8] ***Касперович Г.М.***, Миграция населения в города и этнические процессы.(На материалах исследования городского населения БССР), Минск, 1985; ***Гинзбург А.И.***, О влиянии некоторых национальных традиций на миграцию из села в город (На материале Молдавской и Узбекской ССР), СЭ, N 4; 1980, ***Хайкина М.Э.***, К вопросу о структуре межличностного общения мигрантов в иноэтнической среде (По материалам опроса Лининградских татар) СЭ, N4; 1980, ***Карапетян Р.С.***, Ереван – новый центр социально-культурного развития армянского народа.– В кн. Население Еревана (этносоциологические исследования), Е., 1986.

տական լայն մասշտարներ, որին, ըստ Աշխատանքի միջազգային բյուրոյի գնահատման,1980-ական թվականներին մասնակցել է 19,7-ից մինչև 21,7 մլն մարդ: Աշխատելու նպատակով Աֆրիկայի մի շարք երկրներից ժամանակավորապես մեկնում էրն Պարսից ծոցի հարուստ նավթային շրջաններ, Անգլիա, Ֆրանսիա, Թուրքիայից՝ ԳՖՀ, Մեքսիկայից՝ ԱՄՆ, Կանադա և այլն: Կապվուած այդ տեղաշարժերի կարգավորման, աշխատուժի օգտագործման, նոր միջավայրում միգրանտի ադապտացման և այլ հարցերի հետ՝ հիմնախնդրին անդրադարձել են նաև ինչպես խորհրդային, այնպես էլ արտասահմանյան գիտնականներ[1]:

Արտագնացության հիմնախնդրի ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ տեսական, այլև գործնական նշանակություն: Տեսական կողմի քննարկումը հնարավորություն է տալիս դրա ելակետային դրույթների և կառուցվածքի, ինչպես նաև մի շարք հասկացությունների մշակման և ճշգրտման: Արտագնացության գործնական կողմի ուսումնասիրությունն նշանակությունն է՝ ավելի էր մեծանում, երբ ամբողջ երկրում ծառացած էին ժողովրդական տնտեսությունն վերակառուցման և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հարցերը: Արանք առավել սուր արտահայտություն ստացան Հայաստանում 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո, որի հետևանքով Գյումրի, Վանաձոր և Սպիտակ քաղաքների հետ լրիվ կամ մասնակիորեն ավերվեց 342 գյուղական բնակավայր, վնասվեց 54 հազ. բնակելի տուն, 83 դպրոց, շուրջ 90 մանկապարտեզ, առողջապահության 84 օբյեկտ և այլն[2]: Նման պայմաններում, երբ հանրապետությունը որակյալ շինարար մասնագետների մեծ կարիք էր զգում, հարկավոր էր մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտային ոչ միայն այդ շրջանների, այլև ողջ հանրապետության արտագնացների աշխատուժն օգտագործել ավերված քաղաքների և գյուղերի արագ վերականգնման համար[3]:

---

[1] ***Старченков Г.И.***, Проблемы занятости и миграции населения Турции, М., 1975; ***Михайлов Е.М.***, Иностранная рабочая сила во Франции. Экономические, социальные и политические аспекты, М., 1977; ***Латышев И.А.***, Семейная жизнь японцев. М., 1985; Мигранты.– Курьер Юнеско, октябрь 1985г. и др.

[2] «Սովետական Հայաստան», 6. 01 1989թ.:

[3] Դա հնարավորություն կտա նաև վերականգնման աշխատանքներում ընդգրկելու Վրացական ԽՍՀ Լխալքալաքի, Ախալցխայի և Բոգդանովկայի շրջաններից սմեն տարի արտագնացության մեկնող մոտավորապես 15-ից մինչև 20 հազ. հայերի: Տե՛ս «Коммунист», 14.04. 1989г.